ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2015 թվականի թիվ 207 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 171-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1444-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 171-Նորոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Տի և ՀԳՄ հարցերով վարչության պետի զեկուցագիրը՝

ո ր ո շ ում ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 171-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 708250,0 հազար դրամ գումարից 16629,802 հազար դրամը փոխանցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, 7927,296 հազար դրամը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին սեպտեմբեր ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչների սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ ապահովել որոշման կատարումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ Կ. Ադամյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015 թ. նոյեմբերի 12
ք. Իջևան